ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի (սեպտեմբեր-դեկտեմբեր, 2022թ. հունվար, փետրվար) գործունեության

Բաժնի 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության համար պլանավորվել էր իրականացնել 11 գործողություններ: Դրանք ներառում են բաժնի հիմնական գործառույթներից բխող գործընթացներ, այդ թվում **փաստաթղթերի մշակում**, **խորհրդատվություններ**, **ուսումնասիրություններ և վերլուծություններ**, նաև, նախորդ ռազմավարական ծրագրի ավարտին թերի մնացած մի շարք գործընթացներ:

	Ցուցիչների քանակը	իրակ. վերաբերյալ	Որտեղից է ներառված
1. ԳԱՑ 2016-21	2	+	Գործ.
2. Դասախոսների կարիքներ	4	+	Գործ.
3. Գնահատման նոր ձևերի վերաբերյալ	2	+-	ՌԾ
4. Դասընթացների փաթեթներ և խոհրդատվ.	1	+ (կազմված է հաշվետվություն)	Գործ.
5. Ուսանողական խմբի գործունեություն		+ աշխատում է	Գործ., ՌԾ
6. ՄԿԾ մշտադիտարկում		+	Գործ.
7. Ուսանողների կարիքներ	2	+ կազմված է առաջարկությունների փաթեթ	Գործ., ՌԾ
8. Հարցումների կանոնակարգեր, գործիքի անձնագիր	2	+-	Գործ.
9. Ներքին աուդիտի համակարգ	4	+	ՌԾ
10. Բենչմարքինգ	2	-	ՌԾ
11. Հրապ. և թափանցիկ.	2	+	Գործ., ՌԾ
Ընդամենը՝	**21**	**7+, 3+-, 1-**	

2021-22 ուստարվա սեպտեմբերից-դեկտեմբեր ամիսների համար պլանավորված 11 գործողություններից 8-ը բաժինն իրականացրել է ամբողջությամբ, 2-ը՝ մասամբ, 1 գործողության շրջանակներում էական գործընթացներ չեն կատարվել:

Սեպտեմբերի սկզբին բաժինը **համակարգել է** ստորաբաժանումների 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության աշխատանքային պլանների կազմման և հաստատման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է հետևյալ գործընթացները.

1. Հավաքագրել և համալրել է Մասնաճյուղի 2016-21թթ. գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները: Վերլուծված և խմբագրված ԳԱՑ-ը հրապարակվել է: (**Աշխ. պլան գործ.1**)
2. Բաժինը որակի ներքին ապահովման աշխատանքները համակարգելու գործընթացներում ներգրավում է բաժնին կից ուսանողական խմբին, մասնավորապես նրանք կազմակերպում են

տարբեր ուսումնասիրության արդյունքների, հարցաշարերի քննարկումներ ուսանողների հետ, աջակցում են ուսումնասիրությունների կազմակերպման գործում: (Աշխ. պլան գործ.5)

Ուսումնասիրություններ և վերլուծություններ

3. Ուսանողների և դասախոսների կարիքների վեր հանման նպատակով բաժինը 2021թ.-ի հունիսին 1-ից 3-րդ կուրսերի ուսանողների և մասնաճյուղի դասախոսների շրջանում անց է կացրել մասնաճյուղից բավարարվածության առցանց 2 հարցում: Ուսանողական հարցումը ներառել է 3 բաժիններ՝ բավարարվածությունը ռեսուրսներից, պրակտիկաների կազմակերպումից և ուսանողների գնահատումից: Դասախոսական հարցումը հիմնականում 2 բաժիններից. բավարարվածությունը ռեսուրսներից և ուսանողների գնահատումից: Ուսանողական հարցման արդյունքներն ըստ բաժինների վեր են լուծվել և ուղարկվել ամբիոններ (սեպտեմբերին և նոյեմբերին) և բոլոր շահագրգիռ ստորաբաժանումներին: Նշեմ, որ 2 ֆակուլտետներից ստացել ենք արձագանքներ արդյունքների քննարկման և իրենց կարծիքների վերաբերյալ: Դասախոսական հարցման արդյունքները ներկայացվել են ուսանողական հարցման արդյունքների հետ՝ համեմատական վերլուծության տեսքով: (Աշխ. պլան գործ.2,7)

4. 2021թ. հունիսին բաժինը 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակում հետազոտական աշխատանք կատարած ուսանողների շրջանում անց է կացրել հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից բավարարվածության առցանց հարցում, որի արդյունքները **հոկտեմբերին** մշակվել, վերլուծվել և ներկայացվել են բոլոր շահագրգիռ կառույցներին: (Աշխ. պլան գործ.2,7) Նշեմ, որ հետազոտական աշխատանք ղեկավարած դասախոսների շրջանում նույնպես կազմակերպվել է հարցում, որին, սակայն մասնակցել են քիչ թվով դասախոսներ, հետևաբար արդյունքները չեն մշակվել:

5. Բաժինը տարբեր ուսումնասիրությունների և հանդիպումների արդյունքների հիման վրա իրականացրել է ուսանողների կրթական և այլ կարիքների վեր հանում, կազմել է ուսանողների խնդիրների և առաջարկությունների փաթեթ, մշակել է կրթական ծրագրերի որակի բարելավման, ուսանողների ուսումնառությունից բավարարվածության մակարդակի բարձրացման, հետազոտական աշխատանքների իրականացման որակի բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ: Փաթեթն ուղարկվել է ՈԿՀ, քննարկվել է և ուղարկվել է ամբիոններում քննարկելու և վերջնական առաջարկներ մշակելու համար: (Աշխ. պլան գործ.7)

6. Նույն սկզբունքով բաժինը կազմել է նաև դասախոսների կարիքների և խնդիրների փաթեթ, որը նույնպես կներկայացվի ամբիոններին (Աշխ. պլան գործ.2):

Փաստաթղթերի մշակում

7. Բաժնին կից որակի ներքին գործընթացներին աջակցող խումբը փետրվարի սկզբին կազմակերպել է հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ, որի ընթացքում քննարկվել է «Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության» հարցման հարցաշարը՝ վերանայելու համար: Նրանց կողմից հավաքագրված առաջարկները քննարկվել են նաև ԿԲԴՎ բաժնի հետ և հարցաթերթը վերանայվել է: Բաժինը դասախոսական հարցման հարցաշարն ուղարկել է ամբիոններ քննարկման և նոր առաջարկների համար (դասախոսների կողմից առանձնապես առաջարկներ չեն եղել):

Նույն խմբի աջակցությամբ բաժինն արդեն ավարտել է առաջին կիսամյակի հետազոտական աշխատանքներից և՛ ուսանողների, և՛ դասախոսների բավարարվածության առցանց հարցումը և **իրականացվում է** արդյունքների մշակում և վերլուծություն:

8. Աշխատանքային պլանի 8-րդ կետի իրականացման համար բաժինը պետք է վերանայեր կամ մշակեր իրականացվող տարբեր հարցումների համար կանոնակարգեր: Նշեմ, որ մասնաճյուղից բավարարվածության ուսանողական և դասախոսական հարցման կանոնակարգերը վերանայման փուլում են (նախկին 3 հարցուները միավորվել են մեկ հարցումի մեջ, իսկ կանոնակարգերը չեն փոխվել), իսկ հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցման կանոնակարգերը մշակվում են: Ուղղակի այդ 4 հարցուների և մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման համար մշակվել են գործիքի անձնագրեր (5 հատ): (**Աշխ. պլան գործ.8**)

9. Ուսանողների գնահատման մի քանի կիրառական տեխնոլոգիաների (Moodle, Kahoot, Mentimetr) վերաբերյալ կազմվել են **ուղեցույցներ**, պլանավորվում է ԿԲԴՎ բաժնի հետ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ այդ համակարգերի կիրառման վերաբերյալ: (**Աշխ. պլան գործ.3**)

10. Ըստ աշխատանքային պլանի բաժինը վերանայել է մասնաճյուղում ներքին աուդիտի անցկացման կարգը: Այս գործընթացը մնացել էր նախորդ ռազմավարական ծրագրից: Այդ կարգով նախկինում աուդիտ իրականացվել է: Վերանայված կարգն ուղարկվել է ՈԿՀ, քննարկվել է և կուղարկվի ԳԽ հաստատման:(**Աշխ. պլան գործ.9**)

Այլ ընթացիկ գործընթացների շրջանակներում

1. Բաժինը դեռևս 2021թ.-ի հունիսից իր գործառույթների շրջանակներում, **համակարգում է** Մասնաճյուղի 2022-26 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, նրա իրականացման պլան-ժամանակացույցի մշակման աշխատանքները, ակտիվ **մասնակցում է** այդ աշխատանքներին.

- ✓ ըստ ՌԾ-ի 3 նպատակների առաջընթացի գնահատման ցուցիչների պատրաստել է հատուկ ձևաչափեր, որոնց միջոցով գրանցվելու են մասնաճյուղի ձեռքբերումները ՌԾ-ի իրականացման ժամանակահատվածում,
- ✓ նախնական տեսքով մշակվել է ՌԾ-ի ցուցանիշների և Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների համապատասխանեցման և համալրման/վերանայման փաստաթուղթ-ցանկը:

Պարոն Մակարյանի առաջարկով բաժինը հունվարին մշակել է ՌԾ-ի կատարողականի գնահատման **ընթացակարգ**, որը ներառում է հետևյալ 5 փաստաթղթերը.

- ✓ Մասնաճյուղի ՌԾ-ի կատարողականի գնահատման մեթոդաբանությունը,
- ✓ ՌԾ-ի արդյունքների և գործունեության կատարողականի գնահատման մեթոդները,
- ✓ Գործունեության առանցքային ցուցանիշների վերանայման մոտեցումները,
- ✓ Ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցի վերանայման մեխանիզմները,
- ✓ ՌԾ-ի նպատակերի իրականացման արդյունավետության գնահատում:

Խորհրդատվական աշխատանքներ

11. Դասախոսներին աջակցելու համար բաժինը **նոյեմբերին** դասընթացների գնահատման կազմակերպման ձևի վերաբերյալ քննարկումներ է իրականացրել ամբիոններում, ապա դեկտեմբեր և հունվար ամիսներին ուսանողական խմբի օգնությամբ նախապատրաստել և կազմակերպել է ամբիոնների կողմից առաջարկված **դասընթացների գնահատում՝** առցանց հարցման միջոցով: Հարցման արդյունքները ուղարկվել են ամբիոններ քննարկելու և դասախոսների կողմից իրենց դասընթացները գնահատելու համար:

12. **Նոյեմբերի** վերջին բաժնի աշխատակիցները հանդիպումներ են ունեցել ամբիոնների վարիչների և լաբորանտների հետ **դասալսումների** անց կացման և արդյունքների գրանցման հետ կապված խորհրդատվության շրջանակներում: **Դեկտեմբերի** վերջին բաժինը հավաքագրել է 1-ին կիսամյակում ամբիոններում իրականացված դասալսումների և փոխադարձ դասալսումների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները՝ ուսումնասիրելու և դասավանդման լավագույն փորձը տարածելու համար: Արդյունքները վերլուծման փուլում են:

Այս խորհրդատվությունը նպատակ ուներ աջակցել ամբիոններին՝ հիմնավոր կիրարկելու գոյություն ունեցող կարգը: Նշեմ, որ այս ուղղությամբ ձեռքբերումներ կան:

13. **Դասընթացների փաթեթների** կազմման հետ կապված խորհրդատվության շրջանակներում բաժնի աշխատակիցները հանդիպումներ են ունեցել ամբիոնների վարիչների հետ, նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում խորհրդատվությամբ աջակցելու համար: Նշենք, որ ամբիոններից առաջարկներ չեն եղել: Սակայն ամբիոններում 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի դասընթացների համար փաթեթների առկայության վերաբերյալ բաժնի հավաքած տվյալները, որոնք բաժնում ամփոփվել են **հունվարին,** ցույց են տալիս, որ որոշ ամբիոններ խնդիր ունեն փաթեթների կազմման հետ: Մի քանի ամբիոններում դասընթացների փաթեթների փոխարեն առկա են կամ ծրագրեր կամ թեմատիկ պլաններ:

Դասախոսներից շատերը խնդիր ունեն կրթական վերջնարդյունքների ձևակերպման և վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման ձևերի կիրառման հետ կապված, այդ մասին նրանք նշել են հարցումներում:

Դասընթացների փաթեթների վերաբերյալ արդյունքները բաժինն ամփոփել է հունվարին: 2-րդ կիսամյակի համար կառաջարկենք ԿԲԴՎ բաժնին մեր աջակցությամբ, կազմակերպել վերապատրաստման դասընթաց: (**Աշխ. պլան գործ.4**):

14. Բաժինը, **դեկտեմբերին** ըստ ստորաբաժանումների հաշվետվությունների **կազմել է** Մասնաճյուղի 2020-21 ուստարվա գործունեության հաշվետվությունը:

Բաժինը մասնակցում է ՈԿՀ-ի աշխատանքներին:

Մասնակցում է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի մշտադիտարկման աշխատանքներին :(**Աշխ. պլան գործ.6**):

Բաժինը փետրվարից պարոն Մակարյանի առաջարկով ուսումնասիրում է եվրոպական առաջատար բուհերում **մոդուլային կրթության** կազմակերպման սկզբունքները, ձևերը, ուսումնական պլանների կազմման մոտեցումները:

Ընթացիկ գործունեություն

1.Այժմ բաժինը մշակում է մասնաճյուղի «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով հեռակա ուսուցման մագիստրտուրայի շրջանավարտների ստացած կրությունից բավարարվածության ԵՊՀ-ի կողմից իրականացվող հարցման արդյունքների մշակում:

2.Մշակում է 2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողական և դասախոսական հարցումների արդյունքները:

3.Ընթացքի մեջ են մասնաճյուղի 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող գործընթացները, մասնավորապես.

- ԳԱՑ-ի վերանայում,
- ՌԾ կատարողականի գնահատման փաստաթղթերի վերջնական տարբերակների մշակում,
- ՌԾ-ի պլան-ժամանակացույցի հետ կապված գործընթացները,
- Նաև բաժնի գործառույթների շրջանակում խորհրդատվությունների, ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը:

Բաժինը, ամփոփելով հաշվետու ժամանակահատվածում իր գործունեության արդյունքները պարտավորվում է հատուկ ուշադրություն դարձնել չիրականացված կամ մասնակի իրականցված գործընթացներին, հնարավորության սահմաններում ձեռնարկել քայլեր դրանք ավարտին հասցնելու համար:

Դասընթացների փաթեթների վիճակը ամբիոններում

2021-2022 ուստարի 1-ին կիսամյակ

թիվ	Ամբիոնի անունը	Դասընթ. քան.	Պահպանման ձևը		Պարտֆոլիոյի տեսակը						Բացա-կայում է	Նշում-ներ
			տպված տարբ.	էլ. տարբ.	ամբ. փաթ.	փոքր տարբ.	Ծրա-գիր	այլ ձևաչափ	Թեմատիկ պլ. տեսքով	Ընթացքի մեջ է		
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ												
1	Հայոց պատմության և հասարակագիտության	22	3	18	17	1	3			1		
2	Անգլերեն լեզվի և գրականության	18	4	13	17					1		
3	Ֆրանսերեն լեզվի և գրականության	12		12	6		5		1			
4	Մանկավարժության և հոգեբանության	15		9	8		1			6		
		22		22	13			2	7			
5	Ռուսաց լեզվի և գրականության սեկցիա	15	6	7	9	1	3			1	1	
6	Հայոց լեզու և գրականություն	32	7	25	31	1						
	Ընդամենը	136	20	106	101	3	12	2	8	9	1	
		Առկա՝ 92,6%	14,7%	77,9%	80,1%	2,3%	9,5%	1,5%	6,3%	6,6%	0,7%	
Տնտեսագիտության ֆակուլտետ												
1	Ընդհանուր տնտեսագիտության	16		16		8	3		5			
2	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	25		25		1	24					
	Ընդամենը	41		41		9	27		5			

		Առկա՝ 100%		100%		21,9%	65,8%		12,1%			
Բնական գիտությունների ֆակուլտետ												
1	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	15	3	11	12		2				1	
2	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	15	7	4	11					1	3	
	Ընդամենը	30	10	15	23		2			1	4	
		Առկա՝ 83,3%	33,3%	50,0%	92,0%		8,0%			3,3%	13,3%	
4. Կիրառական արվեստի ֆակուլտետ												
1	Դեկոր. , կիր. արվեստի և դիզայնի	22	2	18			20			1	1	
2	Գծանկ. , գունանկ. և քանդակի	20		20	4		16					
	Ընդամենը	42	2	38	4		36			1	1	
		Առկա՝ 95,2%	4,7%	90,5%	10,0%		90,0%			2,3	2,3	
	Ընդամենը ԵՊՀ ԻՄ	249	32	200	128	12	77	2	13	11	6	
		Առկա՝ 93,2%	12,9%	80,3%	55,1%	5,1%	33,2%	0,8%	5,6%	4,4%	2,4%	